ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

✆ 0256-2-14-75
էլ. փոստ:
loriberdhamaynq2017@mail.ru

23.10.2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

Լոռի Բերդ համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի առաջարկների ներկայացման և նախնական գնահատման փուլի արդյունքների ամփոփման նիստի

Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ

Ս. թ. հոկտեմբերի 23-ին, ժամը՝ 11:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի առաջարկների ներկայացման և նախնական գնահատման փուլի արդյունքների ամփոփման նիստը: Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Վահրամ Պապիկյանը, նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Մարգարիտա Հովսեփյանը, Մարինե Սահինյանը, Լիլիթ Առաքելյանը, Հասմիկ Բարխուդարյանը, Անահիտ Շահինյանը և <<Արգինա>> ՀԿ-ի ներկայացուցիչ՝ Արթուր Մելիքսեթյանը:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ Վ. Պապիկյանը նախ հայտնեց, որ ըստ պլան-ժամանակացույցի ավարտվել է մասնակցային բյուջետավորման առաջարկների ներկայացման փուլը: Ներկայացվել են 17 առաջարկներ:

Հանձնաժողովի անդամները առանձին քննարկեցին ներկայացված առաջակները, որոշները մերժվեցին հայտի բացակայության պատճառով, մեկ հայտ էլ մերժվեց, քանի որ ՏԻՄ-ի իրավասությունների շրջանակում չէր գտնվում: Երկար քննարկումից հետո հանձնաժողովի անդամները որոշեցին քվեարկության դնել <<Խաղահրապարակի կառուցում, խաղային սարքավորումների տեղադրում>> ծրագրերը, որոնք ներկայացվել էին գրեթե բոլոր բնակավայրերի բնակիչների կողմից:

Նիստի վերջում հանձնաժողովի անդամները մասնակցային բյուջետավորման առաջարկների ներկայացման և նախնական գնահատման փուլը գնահատեցին դրական, իսկ հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Վահրամ Պապիկյանը ըստ պլան-ժամանակացույցի հայտարարեց ներկայացված առաջարկների համար հանրային լսումներ իրականացնելու փուլի վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ _____ Վ. Պապիկյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Մ. Հովսեփյան

_____ Հ. Բարխուդարյան

_____ Լ. Առաքելյան

_____ Ա. Շահինյան

_____ Ա. Մելիքսեթյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ. Սահինյան